

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վահան Պողոսյան Արմենի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍՕԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը .00.03.- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությունը ամբողջատեսակի տնտեսական թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
Տնտեսագիտության դոկտոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

ԵՐԵՎԱՆ 2018
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽԻ Առևտրային կամակերպությունների գործունեության ֆինանսական ռիսկերը	16

1.1\$ ֆինանսական ռիսկերի ձևավորումը առևտրային կազմակերպություններում	16
1.2Կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման առանձնահատկությունները	38
1.3\$ ֆինանսական ռիսկերի հաշվառման և վերլուծության գործառնությունները կազմակերպությունների կառավարման համակարգում	54
ԳԼՈՒԽII \$ ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները առևտրային կազմակերպություններում	70
2.1\$ ֆինանսական ռիսկերի ճանաչման և չափման հիմնախնդիրները, կառավարչական հաշվառման համակարգում	70
2.2.....\$ ֆինանսական ռիսկերի համակարգային հաշվառման մեթոդաբանական հիմնախնդիրները	88
2.3Ռիսկերի հաշվապահական հաշվառման քաղաքականություն մշակման մոտեցումները	103
ԳԼՈՒԽIII \$ ֆինանսական ռիսկերի վերլուծության կատարելագործման ուղիները առևտրային կազմակերպություններում	129
3.1\$ ֆինանսական ռիսկերի վերլուծության ընթացակարգի բարելավման ուղիները առևտրային կազմակերպություններում	129
3.2 Ռիսկերի կառավարչական վերլուծության գործառնությունները ֆինանսական միկրոհավասարակշռության համակարգում	147
3.3\$ ֆինանսական ռիսկերի գործունային վերլուծության մեթոդաբանական հիմնախնդիրները	161
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	182
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	192
ՀԱՎԵԼՎԱԾ	

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թե մայի արդիականությունը

Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը, որպես կանոն, ուղեկցվում է ֆինանսական ռիսկերի ձևավորմամբ, որոնք գրեթե միշտ առկա են գործարարության լոռտում: Դրա հիմնական պատճառը կազմակերպությունների կողմից շահույթի հետապնդումն է, որը անխուսափելիորեն ուղեկցվում է ռիսկային գործունեությամբ: Ձեռնարկատիրությունը տնտեսավարման մյուս բնագավառներից (հանրային, սոցիալական, բարեգործական) տարբերվում է հենց նրանով, որ առավելագույն շահույթի ձգտման պարագայում պահանջվում է իրականացնել որոշակի և բազմաբնույթ ռիսկային գործարքներ, որոնցում էական տեսակարար կշիռ ունեն ֆինանսական ռիսկերը: Այս առումով, արդիական է համարվում առևտրային կազմակերպությունում ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության բարելավման ուղիների որոնումը, որոնց առնչությամբ տարբեր տեսաբաններ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական ռիսկերի գնահատման և վերլուծության մեթոդաբանական հարցերը ներկայումս լայնորեն քննարկվում են ինչպես տեսաբանների շրջանում, այնպես էլ գործնական լոռտում, մինչդեռ, նույնը չի կարելի ասել ռիսկերի կառավարչական հաշվառման մասին: Այսպես՝ այսօր ԶԶ առևտրային կազմակերպությունում կիրառվող կառավարչական հաշվառման շրջանակը սահմանափակվում է միայն ծախսային հոսքերի հաշվառմամբ և թողարկվող արտադրատեսակների կամ

մատուցվող ծառայությունների փաստացի
ինքնարժեքի կալկուլյացիայով: Փաստորեն,
այդպիսով գրեթե անտեսվում կամ շրջանցվում է
տնտեսավարման, մասնավորապես՝ ֆինանսական
ռիսկերի հաշվառման գործընթացը: Յարկ է նշել, որ
վերջինս կանոնակարգվում է միայն առևտրային
բանկերում՝ բանկային գործունեության ռիսկերի
կառավարման տեսանկյունից (ռիսկերի չափում,
կանխարգելում, հաշվետվությունների
ներկայացում), սակայն, միաժամանակ, այդտեղ
նույնպես բացակայում է ռիսկերի կառավարչական
հաշվառման և վերլուծության

համակարգը՝ Էականորեն նվազեցնելով համապատասխան ոլորտում որոշույթներին կայացման արդյունավետության մակարդակը:

Յետևաբար՝ արդիական է համարվում կառավարման օղակներին այնպիսի տեղեկատվության մատուցումը՝ ըստ որի հնարավոր կլինի հիմնավորել, գնահատել, չափելի դարձնել առաջացող ֆինանսական ռիսկերը, վերլուծել դրանց ազդեցությունը և առևտրային կազմակերպություններին ֆինանսական միկրոհավասարակշռության ապահովման վրա՝ համաձայն ձևավորման բնույթի, ինչպես նաև որոշել ռիսկայնության թույլատրելի սահմաններն ու ռիսկահատույցը:

Գործնականում հիմնախնդիր է հանդիսանում նաև ֆինանսական ռիսկերի կանխարգելման և զսպման գծով ժամանակին և հասցեագրված կառավարչական որոշույթներին կայացումը, որը պահանջում է ռիսկերի ձևավորման տեղեկատվական հոսքերի մոնիտորինգի անընդհատությունը և վերահսկողությունը: Այս առումով, առևտրային կազմակերպություններում կարևորվում է ֆինանսական ռիսկերի դրամային չափիչներով ներկայացումը և ընդգրկումը կառավարչական հաշվառման համակարգ, որտեղ ներմուծելով ռիսկերը հաշվառող հատուկ հաշիվներ, հնարավորություն է ստեղծվում ապահովելու ֆինանսական ռիսկերի ձևավորման տեղեկատվական հոսքերի ներկայացման անընդհատությունը և խմբավորումը՝ ըստ ծագման կենտրոնների և պատասխանատու օղակների:

Այս առումով, կարևորվում է նաև առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի իրավիճակային և գործունային վերլուծության գործիքների համակցումը և դրանց գործնական

կիրառման ներդաշնակեցումը, որով մի կողմից հնարավորություն է ստեղծվում ախտորոշելու ֆինանսական ռիսկերի ձևավորման սպառնալիքներն ու զսպման մեխանիզմները, և մյուս կողմից որոշելու, թե որ գործոնները ինչ չափով և ինչ բնույթով են ազդել ռիսկերի ձևավորման վրա, ինչպես նաև հասցեագրված կառավարչական որոշումներ կայացնելու ըստ ֆինանսական ռիսկերի ձևավորման ոլորտների:

Որպես կանոն, ռիսկերի կառավարման տեսուչությունները և հետազոտությունները նպատակադրում են մշակելու մեխանիզմներ՝ ֆինանսական ռիսկերի կանխարգելման կամ զսպման գծով: Սակայն, կարծում ենք, որ առևտրային կազմակերպություններում

փոքր ինչ այլ մոտեցումներ պետք է ցուցաբերվեն
ռիսկերի գծով որոշումներ կայացնելիս: Այստեղ,
նաև պետք է կարևորվեն գործարարության կողմից
ռիսկերի ընդունման մարտահրավերները և
ֆինանսական ռիսկերի առկայության հիմնա-
վորվածության գնահատման մոտեցումները, որոնց
հաջող իրականացման դեպքում
կազմակերպությունները կբարելավեն իրենց
մրցակցային դիրքերը: Այս առումով, արդիական է
համարվում առևտրային կազմակերպությունում
ծնավորված միկրոտնտեսական ֆինանսական
հավասարակաշռության ապահովման
ռիսկայնության հիմնավորվածության և
կազմավորվող ռիսկերի արդարացվածության
գնահատումը, ինչպես նաև կառավարման
մարմիններին կառավարչական ընդգրկուն
հաշվետվությունների ներկայացումը, որոնցում
գետեղված տեղեկատվությունը գործնականում
կնպաստի ֆինանսական ռիսկերի ընդունման գծով
արդյունավետորոշումների կայացմանը:

Կազմակերպություններին ֆինանսական
ռիսկերի կառավարման, վերլուծության և
գնահատման հիմնախնդիրներին մեկնաբանումներ,
քննարկումներ ու լուծման ուղիների
առաջադրումներ կարելի է գտնել ինչպես
արտասահմանյան (Նովիկով Ա., Մենշիկով Ի., Միրոնովա
Ս., Կովալյով Ա., Կրիչևսկի Մ., Կևին Բ., Պոնյագինա Ա.,
Վասիլև Վ., Տեմպման Լ., Ծապկին Ա., Ծուլգին Ա., Ծվեց Ս.),
այնպես էլ հայազգի հեղինակների (Անդրեասյան Ն.,
Անդրեասյան Յ., Բայադյան Ա., Կիրակոսյան Ա.,
Յակոբյան Ա., Գրիգորյան Լ., Գևորգյան Ջ., Մաթևոսյան
Ա., Ստեփանյան Թ. և ուրիշներ) աշխատությունում,
սակայն առևտրային կազմակերպություններին
առումով, վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս չեն
ստացել խորքային լուծումներ, ինչն էլ

կան խորոշել է ատենախոսության թեմատիկ
նւղղվածությունն ու կատարված հետազոտության
նպատակադրումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է առևտրային
կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի
կառավարչական հաշվառման և վերլուծության
բարելավված համակարգի մշակումը՝
տեղեկատվության ապահովվածությամբ նպաստելով
ռիսկերի գծով որոշումներին կայացման
արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

➤ մշակել \$ինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության այնպիսի հայեցակարգ, որտեղ հաշվի կառնվեն ռիսկերի ձևավորման առանձնահատկություններն առևտրային կազմակերպությունում և կներկայացվեն դրանց ճանաչման և գնահատման նոր մոտեցումներ,

➤ ուսումնասիրել \$ինանսական ռիսկերի ձևավորման պատճառները, ինչպես նաև այն նորմատիվային և ներքին իրավական ակտերը, որոնք միտված են ՀՀ առևտրային կազմակերպությունում տվյալ ոլորտի կարգավորմանը,

➤ առաջարկել ռիսկերի արձանագրման, չափման և փաստաթղթավորման համակարգային գործընթացներ, որոնք հնարավորություն կտան առևտրային կազմակերպությունում իրականացնելու \$ինանսական ռիսկերի կառավարչական հաշվառում և վերահսկողություն,

➤ փոխկապակցելով \$ինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերը՝ մշակել առևտրային կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի ձևավորման հաշվետվական համակարգ՝ ըստ «\$ինանսական հաշվետվություններ - ռիսկերի ձևավորման կառավարչական հաշվետվություններ - ռիսկերի գծով որոշումների կայացման հաշվետվություններ» շղթայի,

➤ ներկայացնել կառավարչական վերլուծության և հաշվետվողականության նորմաթոգաբանություն, որը թույլ կտա իրականացնել առևտրային կազմակերպությունների \$ինանսական

մի կրոնի ավասարակ շնունթյան վրա ռիսկերի
ազդեցությունն աստիճանի սցենարային
գնահատումներ, ռիսկերի փոփոխման վրա ազդող
քանակական և որակական գործոնների
բացահայտումներ, ինչպես նաև նպաստել հասցեական
կառավարչական որոշումներին կայացմանը:

Հետազոտող լթյան

Ուսումնասիրող լթյան

Օբյեկտը և առարկան: Հետազոտող լթյան օբյեկտը
Հայաստանի Հանրապետության առևտրային
կազմակերպություններն են՝ դրանց
գործունեությանը բնորոշ ֆինանսական ռիսկերի
շրջանակով:

Հե տազ ո տո ւ թ յ ան առ ար կ ան Հայ աս տան ի
Հան ր ապ Ե տո ւ թ յ ան առ և տր այ ի ն
կ ազ մ ա կ Ե ր պ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի \$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ի
ծ և ա վ ո թ մ ան ո լ ո թ տ ն Ե՝ մ ի տ վ ա ծ ռ ի ս կ Ե ր ի
կ առ ա վ ար չ ա կ ան հ ա շ վ առ մ ան և վ Ե ր լ ո ւ ծ ո ւ թ յ ան
հ ա մ ա կ ար գ ի ք ար Ե լ ա վ մ ան ը :

**Հե տազ ո տո ւ թ յ ան տե ս ա կ ան , մ Ե թ ո դ ար ան ա կ ան և
տե դ Ե կ ա տ վ ա կ ան հ ի մ ք Ե ր ը :** Հե տազ ո տո ւ թ յ ան հ ա մ ար
տե ս ա կ ան և տե դ Ե կ ա տ վ ա կ ան հ ի մ ք Ե ն հ ա ն դ ի ս ա գ Ե լ
ռ ի ս կ Ե ր ի գ ծ ո վ ո թ ո շ ո ւ մ ն Ե ր ի կ այ ա գ մ ան ,
մ ա ս ն ա վ ո թ ա պ Ե ս՝ առ և տր այ ի ն
կ ազ մ ա կ Ե ր պ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ո ւ մ \$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ի
հ ա շ վ առ մ ան , վ Ե ր լ ո ւ ծ ո ւ թ յ ան , վ Ե ր ա հ ս կ ո դ ո ւ թ յ ան
վ Ե ր ա ք Ե ր յ ա լ հ այ թ Ե ն ա կ ան և ար տ ա ս ա հ մ ան յ ան
մ ա ս ն ա գ Ե տ ն Ե ր ի ա շ խ ա տ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ը , գ ի տ ա կ ան
հ ր ա տ ար ա կ ո ւ մ ն Ե ր ը , մ ա կ ր ո տ ն տե ս ա կ ան
վ Ե ր լ ո ւ ծ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ը : Ա տ Ե ն ա խ ո ս ո ւ թ յ ո ւ ն ո ւ մ
օ գ տ ա գ ո թ ծ վ Ե լ Ե ն առ և տր այ ի ն
կ ազ մ ա կ Ե ր պ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի գ ո թ ծ ո ւ ն Ե ո ւ թ յ ան
\$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ի ն վ Ե ր ա ք Ե ր ո դ հ ա շ վ Ե տ վ ա կ ան
տ վ յ ա լ ն Ե ր , Հ Հ վ ի ճ ա կ ա գ ր ա կ ան և ո ւ ս ո ւ մ ն ա ս ի թ մ ան
ք ն ա գ ա վ առ ի ն առ ն չ վ ո դ այ լ ն յ ո ւ թ Ե ր :

Ո ւ ս ո ւ մ ն ա ս ի թ ո ւ թ յ ան մ Ե ջ կ ի թ առ վ Ե լ Ե ն
\$ ի ն ա ն ս ա տ ն տե ս ա կ ան , վ ի ճ ա կ ա գ ր ա կ ան և գ ո թ ծ ո ն ա յ ի ն
մ Ե թ ո դ ն Ե ր , ի ն չ ա Ե ս ն ա ն \$ ի ն ա ն ս ա կ ան ռ ի ս կ Ե ր ի
ն Ե ր ք ի ն ա ո ւ դ ի տ ի ո ւ վ Ե ր ա հ ս կ ո դ ո ւ թ յ ան
մ ի ջ ա գ գ այ ի ն փ ո թ ձ ա գ ի տ ա կ ան վ Ե ր լ ո ւ ծ ո ւ թ յ ան
Ե դ ա ն ա կ ն Ե ր :

Հե տազ ո տո ւ թ յ ան գ ի տ ա կ ան ն ո թ ո ւ յ թ ը

Հե տազ ո տո ւ թ յ ան գ ի տ ա կ ան ն ո թ ո ւ յ թ ն
առ և տր այ ի ն կ ազ մ ա կ Ե ր պ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի \$ ի ն ա ն ս ա կ ան
ռ ի ս կ Ե ր ի կ առ ա վ ար չ ա կ ան հ ա շ վ առ մ ան և վ Ե ր լ ո ւ -
ծ ո ւ թ յ ան ք ար Ե լ ա վ վ ա ծ հ ա մ ա կ ար գ ի մ շ ա կ ո ւ մ ն Ե :
Մ ա ս ն ա վ ո թ ա պ Ե ս .

➤ Մշակվել է ֆինանսական նիսկերի արդյունքների դրամական չափման մեխանիզմ՝ ըստ որի հնարավորություն է ընձեռվում առևտրային կազմակերպություններում, անընդհատության սկզբունքով, իրականացնելու նիսկերի ձևավորման արդյունքների ճանաչում, տնտեսական չափում, փաստաթղթային արձանագրում և հաշվապահական մշտադիտարկում,

➤ առաջարկվել են ֆինանսական նիսկերի համակարգային հաշվառման մոտեցումներ՝ ներմուծելով դրանց ձևավորմանն առնչվող նոր հաշիվներ, կրկնակի գրանցման հենքով՝ ձևավորման և բաշխման նոր հաշվային

թղթակցու թյուներ՝ փոխկապակցելով
ֆինանսական և կառավարչական հաշվառման
տեղեկատվական հոսքերը,

- մշակվել են ֆինանսական ռիսկերի գործոնային
վերլուծության սկզբունքներ, որոնք թույլ են
տալիս համապարփակ կերպով գնահատել ոչ միայն
առևտրային կազմակերպությունների
ֆինանսական դրույթան հավասարակշռու-
թյունը, այլև դրավրա ազդող քանակական և
որակական գործոնների ազդեցությունը,
ռիսկային սպասումներից տնտեսական կո-
րուստներն ու տնտեսավարման գործընթացում
ֆինանսական կայունության ապահովման թույլ
կողմերը,
- առաջարկվել է առևտրային կազմակերպու-
թյունում կառավարչական հաշվետվու-
թյունների կազմման ձևաչափ, որը հնարավոր
որություններ կայացնելու տնտեսական
գործունեության ռիսկահատույցը՝
այդպիսով իսկ թիրախավորելով
ֆինանսական ռիսկերի դրա-
մային գնահատումներն ըստ
պատասխանատվության կենտրոնների,
սթրես-սցենարային գնահատումների
ու հասցեական կառավարչական
որոշումների:

**Յե տազոտու թյուն արդյունքների գիտագործնական և
կիրառական նշանակությունը:**

Ատենախոսությունը
ներկայացնում է առևտրային
կազմակերպությունների ֆինանսական
ռիսկերի՝ հաշվապահական հաշվառման,
վերահսկողության և կառավարչական
աուդիտի տեսական ու գործնական
ուսումնասիրությունների հիման վրա
մշակված համալիր հետազոտություն,
որը ներառում է որոշակի հիմնարար
առաջարկություններ՝ միտված
առևտրային կազմակերպու-
թյուններում

ծևավորվող ռիսկերի կառավարչական հաշվառման և վերլուծության բարելավման ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ առևտրային կազմակերպություններում՝ նպաստելով ֆինանսական ռիսկերի կառավարման ոլորտում որոշումների կայացման արդյունավետության մակարդակի բարձրացմանը, ֆինանսական ռիսկերի հաշվետվական համակարգի մեթոդաբանության բարելավմանը:

Հետազոտության փորձարկումը և հրատարակումները: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանցքային դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնի դասախոսների կողմից, ՀՈՒՄԿ հիմնադրամի գիտաժողովում (երևան 2017): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց լուսաբանումն են ստացել հեղինակի ճհրատարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Ծարարված է 120 էջում՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

**Գ Լ ՈՒ ԽՈՒ Առևտրային
կազմակերպությունների գործունեության
ֆինանսական ռիսկերը**

**1.1 ֆինանսական ռիսկերի ձևավորումը
առևտրային կազմակերպությունում**

Ֆինանսական ռիսկերի առկայությունը չպետք է գործարարություն ունենալու դիտարկվի սուսկորպես բացասական երևույթ: Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը միշտ էլ ուղեկցվում է ֆինանսական ռիսկերով, որոնք հատկապես առավել ցայտուն են դրսևորվում, երբ համարձակ և նորամուծական որոշումներ են կայացվում:

Ֆինանսական ռիսկերի ձևավորումը առևտրային կազմակերպությունում ընկալվում է որպես բնականանոն երևույթ: Տնտեսագիտական առումով ռիսկերը չեն դիտարկվում սուսկ բացասական կողմերով, այլ մեկնաբանվում են հնարավորինս կանխարգելման կամ ձևավորվող հավանական վնասների նվազեցման տեսանկյունից: Նման մոտեցումը բխում է այն հանգամանքից, որ ֆինանսական ռիսկերի առաջացման նախադրյալները պայմանավորված են որպես առևտրային կազմակերպություն հանդես եկող իրավաբանական անձանց գործունեության բնույթով:

Գործարարությունը, որն իր առջև նպատակ է դնում շահույթի ստացումը, չի կարող ընթանալ առանց տնտեսավարման ռիսկերի: Օգտագործելով նյութական, ոչ նյութական ակտիվներ, մարդկային ռեսուրսներ, ֆինանսական միջոցներ, պարբերաբար կատարելով ներդրումներ, առևտրային կազմակերպությունը չեն կարող գերծմնալ

Ֆինանսատնտեսական ձախողումների և կայուն զարգացման խաթարման վտանգներից, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է ձեռնարկատիրոջանը:

Ձեռնարկատիրոջանը առևտրային կազմակերպությունն ստեղծելու, իր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսներ փնտրելու և այդ գործունեության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների ստացման գործընթաց է: Ձեռնարկատերը անհատ է, որը բավարարում է իր պահանջմունքները և որոշումներ է

կայացնում անորոշության պայմաններում: Մասնագետների կողմից անգամ նշվում է, որ ձեռներեցի եկամուտը նրա կողմից ցուցաբերված ռիսկի դիմաց վճարն է: Ձեռնարկատերը գործարարների շարքում տարբերվում է հենց իր տնտեսավարման առանձնահատուկ ոճով, պայմանավորված նորամուծական գաղափարների որոնման, ներդրումների ձգտման և արդարացված ռիսկային գործողությունների հետ:

Առևտրային կազմակերպությունների, որոնք ձգտում են ձեռնարկատիրական հիմունքներով գործունեություն ծավալել, վերածվում են ակտիվ տնտեսավարող սուբյեկտների: Ի տարբերություն նաև առևտրային կազմակերպությունների, որտեղ հիմնականում գործունեությունը կազմակերպում է տնտեսավարման հաստատուն վարքագծով, առևտրային կազմակերպությունները առանձնանում են նրանով, որ ձգտում են տնտեսական գործունեություն համակարգում նոր գաղափարների ներդրման և նորամուծական գործունեության իրականացման:

Պասիվ տնտեսավարման պարագայում որպես կանոն, չեն իրականացվում նորամուծական նախագծերի փնտրտուքներ, և դրանով տնտեսական գործունեությունը համարվում է սակավ ռիսկային: Ակտիվ տնտեսավարման պայմաններում կատարվում է գաղափարների փոխակերպում տնտեսական կոնկրետ արդյունքների և ի վերջո՝ վաճառահանվում, որի դեպքում առևտրային կազմակերպությունը ոչ միայն կարողանում է կտրուկ բարձրացնել իր եկամուտները, այլև ռիսկի գնալ, քանի որ գաղափարների գեներացիայի գծով կատարված խոշորածավալ ներդրումները կարող են չունենալ այն հատույցը, ինչը որ նախատեսվում էր:

Բայց անգամ պասիվ տնտեսավարման
պայմաններում առևտրային
կազմակերպությունների գործարարությունը
որոշակիորեն ռիսկերով է ներկայացվում:
Ստանձնելով պարտավորություններ պետության,
գործընկեր կազմակերպությունների,
ներդրողների նկատմամբ, գործարարության
անկայուն ընթացքի պայմաններում ձևավորվում են
արտադրական, շուկայական, ֆինանսական,
բնապահպանական ռիսկեր:¹ Մատակարարումների ու
վաճառքի խաթարումների, ներդրումային

¹ Grigoryan L.H., The feasibility of using methods of reducing the risks of innovation projects, // Theory and practice of Russian functioning finance and monetary loan system. A collection of articles of international scientific and practice conference (8-in meeting), December 6-t, 2012, Voroneje, Publish polygraph centre «Scientific Book», 2013, стр 333-338

հապաղումները և թանկ փոխառությունների ձեռքբերման պարագայում ծագում են բազում \$ի նանսական ռիսկեր, վճարունակության թերացումներ, դրամային ներհոսքերի և արտահոսքերի հավասարակշռության խախտումներ, շուկայում մրցունակության դիրքերի թուլացումներ, գործարարության համբավի անկումներ:

Այս առումով, մասնագիտական գրականության մեջ լուրջ քննարկումները տեղիք են տալիս տնտեսական ռիսկերի բազմաբնույթ սահմանումները: Ըստ \$ի նանսատնտեսական ռիսկի համընդհանուր սահմանման, որն արտացոլված է \$ի նանսաբանկային հանրագիտարաններում, ռիսկը բացասական հետևանքներ ունեցող հավանական իրադարձությունն է: Գոյություն ունի նաև նույնատիպ այլընտրանքային սահմանում՝ համաձայն որի ռիսկն անկանխատեսելի վնասների ու տնտեսական եկամուտների կորուստների վտանգ է²: Ըստ մեկ այլ՝ առավել համընդհանուր բնորոշման, ռիսկն անբարենապաստ հավանական իրադարձությունն է, որի հետևանքով կազմակերպության տնտեսական գործունեությունը դրական սպասելիքները լիարժեքորեն չեն իրականանում և փաստացի փոքր են նախատեսվածից³:


Առևտրային կազմակերպություններում տնտեսական ռիսկը նաև ներկայացվում է տնտեսավարման գործընթացում տեղի ունեցող իրադարձությունների, հետևանքների և հավանականության համակցություն: Ընդ որում, այդ երեք կատեգորիաները մեկնաբանվում են եռանկյունու փոխկապակցված կողմերի տեսքով, որի

² Кевин Бюлер, Гуннар Притч. Обуздание риска. // Вестник McKinsey № 4 2003, стр. 111-121

³ Тепман А.Н. Управление рисками в условиях финансового кризиса, // М.:ЮНИТИ, 2011, стр. 295

գագաթում իրադարձություններն են, իսկ հիմքում
ընկած են կազմակերպությունների տնտեսական
գործունեության հետևանքները՝ իրենց
հավանական դրսևորումներով (տես գծապատկեր 1.1.1):
Ռիսկերի բնորոշման նման մոտեցումը առավելապես
ընդունելի է առևտրային կազմակերպությունների
ռիսկ մեկնեջմենթի համար, որը տնտեսական
գործունեությունը դիտելով որպես փոխ-
կապակցված իրադարձությունների շղթա,
ենթադրում է ինչպես բարենպաստ, այնպես էլ
անբարենպաստ հետևանքների ձևավորման
հավանականություն:

Իրադարձություններ



Գծապատկեր 1.1.1 Տնտեսական ռիսկերի հավանական արդյունքների ձևավորման պատճառահետևանքային եռանկյունին⁴

Մասնագիտական գրականության մեջ հայտնի են նաև տնտեսական ռիսկերի այլ ձևակերպումներ, որոնք ներկայացվում են որպես՝ «որոշումների կայացման գործընթացում անորոշություն», «տնտեսելի ապագայում կազմակերպությունների տնտեսական գործունեության անբարենպաստ իրավիճակների ձևավորման հավանականություն», «տնտեսավարման բարենպաստ ելքերի ու սպասելիքների չարդարացման հավանականություն», «ֆինանսատնտեսական գործունեությունից ակնկալվող շահույթի հավանական նվազում»:⁵ Բոլոր դեպքերում, տնտեսական ռիսկերի բնորոշումներում ընդգծվում է երկու հանգամանք.

- ռիսկը տնտեսավարման տնտեսելի ապագայում ակնկալվող հավանական իրադարձություն է,
- ռիսկից ձևավորվող տնտեսական անբարենպաստ հետևանքները հանգեցնում է

⁴ Кричевский М.А., Финансовые риски, Кнорус, М., 2013, стр. 26

⁵ Шапкин А.С., Экономические и финансовые риски, // "Дашков и К", М. 2013, стр. 24

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական
գործունեությունում կորուստների:


Ինչ վերաբերում է ֆինանսական ռիսկերի բնորոշումներին, ապա մասնագիտական գրականությանը յուրաքանչյուր հեղինակները նույնպես չեն գալիս ընդհանուր հայտարարի: Մի կողմից, առևտրային կազմակերպությաններում ֆինանսական ռիսկը բնորոշվում է որպես դրամական միջոցների գուտհոսքերի չնախատեսված կորուստ, մյուս կողմից, ֆինանսական ռիսկերը դիտարկվում են հիմնականում ներդրումային գործունեությանը դրական ակնկալումներին հավանական չարդարացումներ:⁶

Մասնագիտական գրականությանը ֆինանսական ռիսկերը այլ բնորոշումներով են հանդես գալիս առևտրային բանկերում, ներկայանալով որպես օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն ձևավորվող ռիսկային գործոնների համախումբ (տես գծապատկեր 1.1.2): Ընդ որում, եթե Բազելյան սկզբունքներով առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերը հանդես են գալիս փոքրաթիվ խմբով (վարկային, շուկայական), ապա ֆինանսական ռիսկերի դասակարգումը ինչպես երևում է գծապատկեր 1.1.2-ից, հեղինակի կողմից ածանցվում և առավել ընդգրկուն շրջանակով է ներկայացվում, ընդհուպ հաշվի առնելով հարկային, մակրոտնտեսական, գլոբալ համակարգային գործոնները: Ֆինանսական ռիսկերի նման բնորոշումները նույնպես առնչվում են բանկային ֆինասատնտեսական կառավարման համակարգում գործող ռիսկ մենեջմենթի հետ, որտեղ կարևորվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններով պայմանավորվող հավանական ֆինանսական կորուստները:

Սակայն, մեր կողմից բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը չեն ընդգրկվում հետազոտության շրջանակ, քանի որ այդ ոլորտը

⁶ Кричевский М.А., Финансовые риски, // Кнорус, М., 2013, стр. 26

բավականին ընդգրկուն կանոնակարգված Ե
 Յայաստանի Յնարապետության կողմից: Այսպես, ՅՅ
 կենտրոնական բանկի կողմից հաստատված
 կանոնակարգ 4-ում ներկայացվում են \$ինանսական
 ռիսկերի մեկնաբանումները բանկային
 համակարգում և դրանց կառավարման
 մոտեցումները:⁷



Գծապատկեր 1.1.2 \$ինանսական ռիսկերի
 բաղադրիչներին համախուլմբը առևտրային
 բանկերում⁸

Յատկանշական է, որ տնտեսության ոչ իրական
 հատվածում գործող առևտրային
 կազմակերպություններին բնորոշ է \$ինանսական
 ռիսկերի ձևավորման առավել լայն շրջանակ, քան ի
 որ այստեղ կազմակերպվող տնտեսական
 գործունեությունը շատ ավելի զգայուն է
 դրամական միջոցների ներգրավման և տեղաբաշխման
 գործընթացից ակնկալվող հավանական կո-

⁷Բանկերի ներքին վերահսկողության իրականացման
 նվազագույն պայմանները, // ՅՅ ԿԲ կանոնակարգ 4, բաժին 4
 «Ռիսկերի կառավարում», 2013 թ.,

⁸Անդրեսայան Ն., \$ինանսական ռիսկերի դասակարգումը
 առևտրային բանկերում, // ՅՅ տնտեսության զարգացման
 հիմնախնդիրները 25-ամյա անկախության շեմին, ՅՅ ուսիսային
 համալսարան, միջբուհական գիտաժողովին նվիրված, 2015 թ., էջ 64-69

ր ու ս տ ն եր ի ն կ ա տ մ ա մ բ , ո ր ո ն ք կ ա ր ո ղ ե ն ծ ա գ ե լ
տ ո կ ո ս ա յ ի ն դ ր ու յ ք ա չ ա փ եր ի փ ո փ ո խ ու մ ի ց ,
ա ր տ ա ր ժ ու յ թ ի փ ո խ ա ր ժ ե ք ի տ ա տ ա ն ու մ ն եր ի ց ,
բ ա ն կ եր ի ի ր ա ց վ ե լ ի ու թ յ ա ն և կ ա փ ի տ ա լ ի հ ա մ ա ր -
ժ ե ք ու թ յ ա ն ո ր ա կ ա կ ա ն չ ա փ ա ն ի շ ն եր ի ա ն կ ու մ ն եր ի ց :
Մ ա ս ն ա գ ե տ ն եր ի կ ո ղ մ ի ց ը ն դ գ ծ վ ու մ է , ո ր
ա վ ա ն դ ա կ ա ն ա կ ա դ ե մ ի ա կ ա ն մ ի ջ ա վ ա յ ր ու մ
գ ո յ ու թ յ ու ն ու ն ի պ ն դ ու մ , ո ր ո ի ս կ եր ի
կ առ ա վ ա ր մ ա ն ո ա գ մ ա վ ա ր ու թ յ ու ն ն եր ը գ ր կ վ ա ծ ե ն
ո ր ո շ ա կ ի ա ր ժ ե ք ի ց : Մ ի ն չ դ ե ո ո ի ս կ եր ի կ առ ա վ ա ր մ ա ն
գ ո ր ծ ը ն թ ա ց ը թ ու յ լ է տ ա լ ի ս բ ա ն կ եր ի ն
ա վ ե լ ա ց ն ե լ ու ի ր ե ն ց ա կ տ ի վ ն եր ի ա ր ժ ե ք ը :⁹

Ի ն չ վ եր ա բ եր ու մ է տ ն տ ե ս ու թ յ ա ն ի ր ա կ ա ն
հ ա տ վ ա ծ ու մ գ ո ր ծ ո ղ առ ն տր ա յ ի ն
կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ու մ ձ և ա վ ո ր վ ո ղ
Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ո ի ս կ եր ի ձ և ա կ եր պ ու մ ն եր ի ն ,

⁹Կ ի ր ա կ ո ս յ ա ն Ա. Յ Յ բ ա ն կ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն
ո ի ս կ եր ի գ ն ա հ ա տ ու մ ճ գ ն ա ժ ա մ ի պ ա յ մ ա ն ն եր ու մ ,//§21-ր դ դ ա ր !,
թ ի վ 5(33), 2010. Է ջ 59(59-67)

ապա հեղինակները հիմնականում դրանք փոխկապակցում են անբարենպաստ ֆինանսական արդյունքներ առաջացնող գործոնների հետ, ինչպիսիք են¹⁰


- հումք և նյութերի մատակարարումների խափանումները,
- թողարկված արտադրանքի (ծառայությունների մատուցման) շուկայական գների նվազեցումները,
- ներգրավվող վարկային ռեսուրսների թանկացումները,
- ներդրումային գործընթացներից ֆինանսական ակնկալիքների չարդարացումները,
- շրջանառու կապիտալի պտույտի դանդաղեցումները,
- դրամական գուտհոսքերի նվազեցումները:

Թվարկած բոլոր գործոններն էլ ֆինանսական ռիսկեր են պարունակում, որոնքի վեջոբացասաբար են անդրադառնում առևտրային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի ձևավորման վրա՝ հանգեցնելով շահույթի կրճատման: Յետևաբար, ֆինանսական ռիսկերի նման մեկնաբանման հիմքում դրվում է տնտեսավարման անբարենպաստ արդյունքներից առևտրային կազմակերպությունների շահույթի նվազման հավանականությունը:

Ֆինանսական ռիսկերը մասնագիտական գրականության ընդհանրապես են նաև ձևավորման շարժառիթների տեսանկյունից և ներկայացվում են մարդկային գործոնի հետ ուղղակիորեն առնչվող և անուղակիորեն կապ չունեցող խմբերով (տես գծապատկեր 1.1.3): Այսպես, թե ֆինանսական ռիսկերը ուղղակիորեն առնչվում են առևտրային կազմակերպությունների կորպորատիվ,

¹⁰ Панягина А.Е. Подходы к пониманию и классификации рисков, // Современная экономика: проблемы, тенденции, перспективы. 2012. №6. С. 6-16.

գործառնական գործառույթներին, ապա այստեղ անգամ ընդգրկվում են մարդկային գործունակ պայմանավորված հավանական ձախողումները՝ դրանք նույնպես դասելով \$ինանսական ռիսկերի թվին: \$ինանսական ռիսկերի մյուս խումբը ձևավորվում է շուկայական միջավայրի փոփոխումներից, կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության աստիճանի անկումից, ներդրումային անարդյունավետ քաղաքականություններից:



Գծապատկեր 1.13 \$ինանսական ռիսկերի բնորոշումը ըստ ձևավորման շարժառիթների¹¹

Գրականության մեջ ռիսկերը բնորոշվում են նաև պատահական իրադարձությունների ձևավորման հավանականություններից բխող արդյունքների համախումբ (S),¹² դրանք ներկայացվելով որպես .

n

¹¹ Crouhy M., Riks management, // New York, McGraw hill, 2001, page 24

¹² Кричевский М.А., Финансовые риски, //Кнорус, М., 2013, стр. 10

$$S = \sum_{i=1}^n p_i x_i$$

$$i=1$$

որտեղ՝

i - ն՝ ռիսկային հավանական գործոնների թվանիշն է

x_i - ն՝ ռիսկային i -րդ գործոնի անբարենպաստ արդյունքը

p_i - ն՝ i -րդ գործոնի կայացման հավանականությունը

Սակայն, ռիսկերի բնորոշման նման մոտեցումը առաջին հերթին բխում է առևտրային կազմակերպություններում հրականացվող ներդրումների կառավարման

նպատակներին, քանի որ հաշվարկելով S_1, S_2, \dots, S_n ցուցանիշները, դրանցից նվազագույնով կկայացվի հենց այդ ուղղությամբ իրականացվող ներդրման կառավարչական որոշում:

Նաև կարծիք է հայտնվում ֆինանսական ռիսկը գնահատել ակտիվի գնման դեպքում: Նման գնումը սովորաբար իրականացվում է այն դեպքում երբ սպասում են ակտիվի գնի բարձրացման՝ նպատակ ունենալով ստանալ եկամուտառքով ավանդի գների միջև տարբերությունից: Եթե որևէ ակտիվի նկատմամբ ներդրողը համոզված է հակառակը, այսինքն, նրա արժեքի նվազման մեջ, ապա նա կարող է իրականացնել գործարք, որը կոչվում է կարճ ավանդ (short sale): Այդ նպատակով նատվյալ ակտիվը փոխառում է մեկ այլ ներդրողից (կրեդիտոր), անմիջապես վաճառում է այն, իսկ հետևանքում շուկայում ցածր գնով ձեռք է բերում և վերադարձնում է այն կրեդիտորին: Ընդ որում նա պարտավոր է կրեդիտորին վճարել ակտիվի ընթացիկ եկամուտը գործարքի ընթացքում և որոշակի տոկոս, գործարքի համար հնարավորության տրամադրման համար (վարկի համար):¹³

Օպտիմալացման խնդիրը հանգում է ներդրումների պորտֆելի այնպիսի կառույցի (կազմի) սահմանմանը, որպեսզի ակնկալվող եկամտի մեծությունը և ռիսկի մակարդակը համապատասխանեն ներդրողների նպատակներին: Ընդ որում, որպես նպատակային գործառնություն կարող է հանդես գալ ռիսկի նվազեցումը տրված եկամտաբերության դեպքում կամ եկամտի առավելագույնացումը՝ ռիսկի դեպքում, որը բարձր է տրվածից: X վեկտորի բաղադրիչների վրա, որոնք

¹³ Գրիգորյան Լ., Պողոսյան Վ. Ռիսկի և եկամտաբերության հարաբերակցությունը, օպտիմալ ներդրումային պորտֆելի արդյունավետության վերլուծությունը, // Բանբեր ՀՊՏՀ, 2017, էջ 91

Ներկայացնում են պորտֆելի կազմը, կարող են դրվել տարբեր սահմանափակումներ, որոնք կխված են գործարքի տեսակից, մասնակցող ակտիվների տեսակից, բացվող դիրքորոշումների մեծությունից և այլն: Պորտֆելները, որոնք բավարարում են տվյալ շուկայի պայմաններին, կոչվում են թույլատրելի:

Բլեքի մոդելում թույլատրելի են հանդիսանում ցանկացած պորտֆելներ, այսինքն ավելտորը բավարարում է միայն հիմնական սահմանափակմանը.

$$\sum_{i=1}^n X_i = 1$$

Կարճ (short) դիրքորոշումների առկայությունը (ոչ ժխտողական պայմանի բացակայությունը) թույլ է տալիս իրականացնել որքան անհրաժեշտ է մեծ եկամտաբերություն, բնականաբար, մեծ ռիսկի հաշվին¹⁴

Մեր կարծիքով, \$ինանսական ռիսկերի սահմանումը պետք է բխի ոչ թե դրանց կառավարման մոտեցումից, այլ ձևավորման նախադրյալներից: Իսկ առևտրային կազմակերպությունների \$ինանսական ռիսկերի ձևավորման նախադրյալների բացահայտման տեղեկատվական համակարգը հիմնականում ներկայացվում է հրապարակվող \$ինանսական հաշվետվություններով: Ընդ որում, կարևոր է ի սկզբանե կողմնորոշվել, թե տնտեսավարման ինչպիսի ոլորտներում են ձևավորվում \$ինանսական ռիսկերը: Այս հարցում, ինչպես ցույց են տալիս աղբյուրազիտական վերլուծությունները, հեղինակների մոտ նույնպես համակարծությունն չկա: Եվ հետևաբար, կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլինի միջազգայնորեն ընդունված տեղեկատվական չափանիշներին հետևելը: Ուստի, \$ինանսական ռիսկերի ձևավորումը հիմնականում պետք է փոխկապակցել առևտրային կազմակերպությունների \$ինանսական գործունեության հետ:

Համաձայն, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, կազմակերպությունների գործունեության արդյունքները հաշվետվողականության տեսանկյունից ներկայացվում են երեք խմբով՝ գործառնական, ներդրումային և \$ինանսական: Գործառնական գործունեությունը հիմնականում

¹⁴ Գրիգորյան Լ., Պողոսյան Վ. Ռիսկի և եկամտաբերության հարաբերակցությունը, օպտիմալ ներդրումային պորտֆելի արդյունավետության վերլուծությունը, // Բանբեր ՀՊՏՀ, 2017, էջ 92

նւղղված է կազմակերպության հասուն թի
ձևավորմանը և համարվում է առևտրային
կազմակերպությունների տնտեսավարման
լոկոմոտիվը: Ներդրումային գործունեությունը
երկարաժամկետակտիվների և այլ ներդրումների
ձեռքբերումն ու օտարումն է, իսկ Ֆինանսավորման
գործունեությունը հանգեցնում է կազմա-
կերպության ներդրված սեփական կապիտալի և
փոխառումի շոցների մեծության ու կառուցվածքի
փոփոխությունների:¹⁵

¹⁵ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 7
//ՏՀ հաշվետվությունների ամսագրի հոսքերի մասին ,
կետ 6, 2011թ.

Առևտրային կազմակերպություններում
 \$ինանսական ռիսկերի ձևավորման ազդակները, նախ
 և առաջ, դրսևորվում են սեփական և փոխառու
 միջոցների կառուցվածքային
 փոփոխություններում՝ գործարարության կայուն
 զարգացումն ապահովելու նպատակով
 պարտավորություններին մարման
 կարողությունների, ինքնավարության աստիճանի,
 ինչպես նաև կապիտալի համարժեքության
 բացահայտման համատեքստում: Ուստի \$ինանսական
 ռիսկերի բնորոշման հիմքն առաջին հերթին պետք է
 փնտրել հենց \$ինանսական գործունեության մեջ՝
 պայմանավորված ոչ միայն տվյալ հասկացության
 բովանդակությամբ, այլև կազմակերպությունում
 ներդրված սեփական կապիտալի, ինչպես նաև դրան
 գույքահեն ձևավորված փոխառու միջոցների
 մեծության ու կառուցվածքի փոփոխությունով:
 Այսպիսով՝ որքան համահունչ լինեն սեփական և
 փոխառու միջոցների կառուցվածքային
 փոփոխություններն առևտրային
 կազմակերպությունների կայուն զարգացման
 ընթացքին, այնքան ավելի կնվազեն
 գործարարության \$ինանսական ռիսկերը:

ISO 31000 «Ռիսկերի կառավարում. սկզբունքներ և
 դեկլարում» միջազգային ստանդարտը անդրադարձ է
 կատարում կազմակերպությունների տնտեսական
 գործունեության ռիսկերի բնորոշմանը, հիմք
 ընդունելով անորոշությունը, որը ներազդում է
 կազմակերպության նպատակների իրագործման վրա:
 Մասնավորապես, ստանդարտը այս առումով տալիս է
 մի շարք մեկնաբանություններ: Այսպես, որպես
 ներազդեցություն է սահմանվում «սպասումներից
 ակնկալվող շեղումները՝ իրենց դրական և
 բացասական հետևանքներով», իսկ նպատակները
 թիրախավորվում են «\$ինանսական, բնապահպանական,

անձնակազմի արհեստավարժության ոլորտներին»¹⁶
Յատկանշական է նաև, որ ռիսկը բնորոշվում է նաև
որպես «պոտենցիալ իրադարձությունների և
դրանցից բխող հավանական հետևանքների
համեմատություն»¹⁷

Յիմքը նդունելով նման մոտեցումը, մեր կողմից
առաջարկվում է առևտրային
կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի
նոր սահմանում, համաձայն որի

¹⁶ Международный стандарт ISO 31000 «Риск менеджмент – Принципы и руководства», //15 ноября, 2009, пункт 2, Термины и определения

¹⁷ Ն ու յ ն տ ե ղ ը :

«Ֆինանսական ռիսկը տեսանելի ապագայում անբարենապաստ հավանական տնտեսական իրադարձություններ, որը կարող է ձևավորել կորուստներ և սպասումներից ակնկալվող շեղումներ՝ առևտրային կազմակերպության ակտիվների ձեռքբերման աղբյուրների կառուցվածքային փոփոխությունների և դրանցից բխող տնտեսավարման սպասվող արդյունքների ներդաշնակություն խախտման հետևանքով»:

Մեր կարծիքով, առաջարկվող սահմանումը համակողմանի է բնորոշում առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի ինչպես ձևավորման նախադրյալները, այնպես էլ բնույթը: Նախևառաջ, ընդգծվում է, որ ֆինանսական ռիսկերը հավանական անբարենապաստ սպասումներ են, որոնք առաջանում են կազմակերպությունների տնտեսական գործունեությանը զուգընթաց:

Բացի այդ, նախանշվում են առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի ձևավորման նախադրյալները, որոնք բխում են սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության կառուցվածքի փոփոխություններից: Բնականաբար, սեփական կապիտալում կատարվող ներդրումները միտվում են հենց նույն սեփական կապիտալի բաժնեմաս հանդիսացող շահույթի ավելացման սպասումներին, որոնք կայացման լիարժեքության ռիսկեր են պարունակում: Փոխառությունների օժանդակությամբ սեփական կապիտալի կիրառման արդյունավետության բարձրացումը նույնպես կորուստների ձևավորման ռիսկեր է պարունակում, քանի որ առևտրային կազմակերպությունը որոշակիորեն կորցնում է ինքնավարությունը և այդ ֆինանսական լծակի տեղին չօգտագործման պարագայում չեն

ապահովվում տնտեսավարման ցանկալի մրցակցային արդյունքներ:

Եվ վերջապես, ֆինանսական ռիսկերի ձևավորման հավանականությունը մեծանում է, եթե տեսանելի ապագայում առևտրային կազմակերպության սեփական կապիտալի և փոխառումից ոգների կառուցվածքային տեղաշարժերն ու փոփոխությունները չեն համապատասխանում տնտեսավարման կայուն զարգացման նախանշված ընթացքին:

1.2 Կազմակերպությունների ֆինանսական նիսկերի գնահատման առանձնահատկությունները


Առևտրային կազմակերպությունների ֆինանսական նիսկերի բնորոշումը փոխկապակցվում է կառավարման գործառնությունների հետ: Եվ այս առումով, նիսկերի ճանաչումը, որպես կանոն, կառավարման գործընթացի գործիքակազմի առաջին բաղադրիչն է հանդիսանում: Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը միշտ էլ ուղեկցվում է ֆինանսական նիսկերով, որոնք բացահայտման կարիք ունեն, քանի որ ձևավորման հստակեցմամբ առանձնապես չեն առանձնանում և գործնականում ծագման մեծ կամ փոքր հավանականությամբ են օժտված, ուստի և կարող են անգամ կառավարման մարմինների կողմից նկատելի չլինել: Տնտեսավարման գործընթացում ֆինանսական նիսկերի «թաքնված բնույթը» պահանջում է դրանց բացահայտում և ճանաչում, որոնք էլ առաջնահերթ ռիզիկոյվում են կառավարման գործառնություններում:¹⁸

Բնականաբար, կառավարումը համարվում է արդյունավետ, երբ այն կարողանում է ժամանակին ու հնարավորինս լայն շրջանակով ճանաչել առևտրային կազմակերպություններից բխող ֆինանսական բոլոր նիսկերը և ընդլայնել կառավարման առարկայի տիրույթը (տես գծապատկեր 1.2.1): Խնդիրն այստեղ բարդանում է նրանով, որ ֆինանսական նիսկերը փոխկապակցված լինելով, որպես կանոն շղթայական ձևավորման հատկություն ունեն և դրանց ժամանակին չբացահայտումը և չճանաչումը կարող են բացասաբար անդրադառնալ

¹⁸ Новиков А.И., Солодкая Т.И. Теория принятия решений и управление рисками в финансовой и налоговой сферах. //Издательство: ИТК Дашков и К, 2012, стр. 34

առևտրային կազմակերպությունների կայուն
զարգացման վրա: Այսպես, եթե ժամանակին չեն
ճանաչվում մատակարարման գործընթացին հատուկ
ֆինանսական ռիսկերը (գնային, դեբիտորական
պարտքերի հավաքագրման, ինֆլյացիոն), ապա դրանք
փոխկապակցվելով արտադրական և իրացման ռիսկերի
հետ (ինքնարժեքի աճ, վաճառքի գների պարտադրված
բարձրացում, շահույթի կրճատում)՝ տնտեսավարման

անբարենապաստհետևանքների շղթայական ռեակցիա են առաջացնում և հանգեցնում են ֆինանսական արդյունքների վատթարացման:



Գծապատկեր 1.2.1 Ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացը առևտրային կազմակերպություններում¹⁹

Այսպես, առավել ընդունելի է համարվում որոշումների կայացման տեսանկյունից տնտեսավարման գործընթացով ուղեկցվող ռիսկերը խմբավորել ըստ կանխատեսելիության աստիճանային հետևյալ գոտիներով՝ ոչ ռիսկային, թույլատրելի ռիսկային, կրիտիկական ռիսկային, աղետալի ռիսկային:²⁰ Բնականաբար, ֆինանսական ռիսկերի դասակարգման նման մոտեցումը կառավարչական որոշումների արդյունավետության

¹⁹ Կազմված է ատենախոսի կողմից՝ տեսական հետազոտությունների հիման վրա:
²⁰ Հակոբյան Ա., Ֆինանսական վարձակալությունն, // հեղ. հրատ., Երևան, 2011թ. էջ 125-127

բարձրացման նպատակ է հետապնդում: Ընդ որում, որքան բարձրանում է ռիսկային գործարքների անկանխատեսելիության աստիճանը, այնքան մեծանում է ֆինանսական կորուստների և անբարենպաստ հետևանքների

ծագման հավանականությունը առևտրային կազմակերպություններում, որով էլ պայմանավորվում են ռիսկերի կառավարման առանձնահատկությունները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ կանխատեսելիության մոտեցման, առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի դասակարգման հարցում տարբեր մեկնաբանություններ կան: Յեղիսակների միմասը գտնում է, որ ռիսկերը առաջին հերթին պետք է խմբավորել ակնառու ճանաչելիության և դժվար բացահայտելիության կտրվածքով, որպեսզի ճիշտ կողմնորոշում ձեռք բերվի ռիսկերի կառավարման պատասխանատվության կենտրոնների տեսանկյունից:²¹ Այսպես, եթե զբոսաշրջային ծառայություն մատուցող կազմակերպությունում բարձր մակարդակի զբոսավարների պակասի հետևանքով առկա է ծառայությունների որակի խախտման հավանականություն և գործարարության եկամտների նվազում, ապա պետք է արձանագրել ակնառու ռիսկերի գոյությունը: Իսկ եթե երկրի հարկային քաղաքականությամբ հանվեն զբոսաշրջային բիզնեսի տրվող արտոնությունները, ապա դրա իրագործման հավանականությունը կներկայացվի դժվար չափելի, իսկ երևույթը՝ դժվար բացահայտելի և անկանխատեսելի:

Այս առումով, մասնագիտական գրականությունում առաջարկվում է նաև ռիսկերը դասակարգել ըստ օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն ձևավորվող խմբերի:²² Բնականաբար, նման կտրվածքով դասակարգումը

²¹ Шапкин А. С. Теория риска и моделирование рисков ситуаций : //,учебник / А. С. Шапкин, В. А. Шапкин. М. : Дашков и К°, 2007. стр. 35-36

²² Панягина А.Е. Подходы к пониманию и классификации рисков // Современная экономика: проблемы, тенденции, перспективы. 2012. №6. С. 6-16.

Ն ու յ ն պ Ե ս ս Ե ր տ ո թ ր Ե ն ա ռ ն չ վ ու մ Է ռ ի ս կ Ե ր ի
կ առ ա վ ա ր մ ա ն գ ծ ո վ պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ա ն ա ս տ ի ճ ա ն ի
հ Ե տ, Ե ր ք ա ռ ն տր ա յ ի ն կ ա զ մ ա կ Ե ր պ ու թ յ ու ն ն Ե ր ու մ
ռ ի ս կ Ե ր ի կ առ ա վ ա ր ի չ ն Ե ր ը ո չ ք ո լ ո թ դ Ե պ ք Ե ր ու մ Ե ն
պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն կ ր ու մ ա մ ք ա ր Ե ն պ ա ս տ
հ ա վ ա ն ա կ ա ն տ ն տ Ե ս ա վ ա ր մ ա ն ա ր դ յ ու ն ք ն Ե ր ի
փ ա ս տ ա գ ի ձ և ա վ ո թ ու մ ն Ե ր ի գ ծ ո վ: Ա յ ս պ Ե ս, Ե թ Ե
մ ա կ թ ո տ ն տ Ե ս ա կ ա ն հ ա վ ա ս ա ր ա կ շ ռ ու թ յ ա ն
հ ա վ ա ն ա կ ա ն խ ա խ տ մ ա ն հ Ե տ ն ա ն ք ո վ կ ա թ ո ղ Ե ն
ձ և ա վ ո թ վ Ե լ գ ն ա ճ ա յ ի ն ռ ի ս կ Ե ր, ա պ ա դ թ ա ն ց
ք ա ց ա հ ա յ տ մ ա ն և կ առ ա վ ա ր մ ա ն գ ծ ո վ ա ռ ն տր ա յ ի ն
կ ա զ մ ա կ Ե ր պ ու թ յ ու ն ն Ե ր ու մ գ ո թ ծ ո ղ ռ ի ս կ Ե ր ի
կ առ ա վ ա ր մ ա ն օ ղ ա կ ն Ե ր ը չ պ Ե տ ք Է

լիարժեք պատասխանատվություն կրեն, կապված
անբարենպաստ միջավայրի ձևավորման օբյեկտիվ
գործոններին հետ:

Կառավարելիության տեսանկյունից,
ֆինանսական ռիսկերի դասակարգմանը մեկ այլ
մոտեցում է ցուցաբերվում, երբ դրանք
ներկայացվում են հետևյալ խմբերով.

- ընդունվող (արդարացելի) ռիսկեր,
- կանխարգելվող ռիսկեր,
- կրճատվող ռիսկեր,
- խուսանավելի (չարդարացվող) ռիսկեր:

Ընդորոշվում, արդարացվող ռիսկերի պարագայում
առևտրային կազմակերպություններում
ակտիվանում են ապահովագրական գործարքները,
նախօրոք ստեղծվում են ռեզերվային ֆոնդեր:
Կանխարգելվող ռիսկերի հավանական ձևավորման
դեպքում առավել արդյունավետ են գործում
սահմանափակող նորմատիվները, ինչպես
ներկայումս արվում է առևտրային բանկերում
(կապիտալի համարժեքություն, իրացվելիություն,
մեկ վարկառուի գծով ռիսկերի նորմատիվային
ռեզոլյատիվներ): Կրճատվող ռիսկերի
կառավարումը առևտրային
կազմակերպություններում իրականացվում է
հեջավորման, դիվերսիֆիկացիայի ճանապարհով:
Բնականաբար, իրենց տնտեսավարման ընթացքում
առևտրային կազմակերպությունները կարող են
արձանագրել նաև չարարացված ռիսկեր, որոնց
գծով փորձում են հավանական սպառնալիքը
շրջանցող (խուսանավող) ռազմավարական
որոշումների կայացնել կամ պարզապես հրաժարվել
դրանք առաջացնող գործարքներից:

Այս առումով հեղինակները գտնում են,
կառավարչական որոշումների կայացման և իրացման
բնույթը էականորեն տարբերվում է արդարացված և

ն չ արդարաց ված ռիսկային գործարքների պարագայում: Եթե ռիսկն առավել կառավարելի է, կառավարումը առավել ապես կանխարգելիչ բնույթ ունի: Իսկ կառավարելի ության տեսանկյունից ոչ արդարաց ված ռիսկային գործարքերը բացասական արդյունքների ձևավորման չափերի և ժամանակի առումով անորոշ ության մեծ աստիճան ունեն, ուստի դրանց գծով կառավարչական որոշումները առավել ապես իրագործվում են ոչ թե կանխարգելման, կամ հավանական վնասների կրճատման ուղղ ություններով, այլ

պարզապես հնարավորինս ռիսկայնություն քարտեզացնելու և ներդրումներ կատարելու գործարքների բացահայտումը և ներդրումներ կատարելու և նպատակով:²³

Տնտեսական գործունեության ռիսկերը մասնագիտական գրականության և ներկայացվում են նաև կառավարելի և անկառավարելի խմբերով:²⁴ Ֆինանսական ռիսկերի կառավարելիության հարցը հատկապես հստակ է դրված առևտրային բանկերում և անգամ կանոնակարգված է ՀՀ կենտրոնական բանկերի կողմից սահմանված նորմատիվներով:²⁵ Բանկերը դիմելով ակտիվների տեղաբաշխման, արդեն իսկ հայտնվում են գործարարության ռիսկային գոտում և ֆինանսական ռիսկերի կառավարելիությանը համարում են առաջնահերթություն: Մրցակցային պայմաններում ձգտելով առավելագույն շահունակություն առևտրային բանկը գույքահեռաբար խնդիր է դնում նվազագույնի հասցնել անբարենպաստ ելքային արդյունքների և կորուստների ձևավորման հավանականությունը: Եվ թվում է թե, որ հենց այս երկու նպատակները հստակորեն հակակշռում են միմյանց: Փորձը ցույց է տալիս, որ հիմնականում առևտրային բանկերի վարկային պորտֆելը ամբողջապես գտնվում է տարաբնույթ ռիսկերի ազդեցության տակ, որոնք ծագում են ֆինանսական շուկաներում տեղի ունեցող տատանումներով, իրացվելիության փոփոխություններով, տոկոսադրույքի տատանումներով և այլն:

²³ Անդրեասյան Ն. Կառավարչական որոշումների ուղղությունները բանկային ռիսկերի շրջանակում, // Հաշվային տեղեկատվական համակարգի բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՈՒՄԿ հիմնադրամ, միջբուհական երկրորդ գիտաժողովին յուրաքանչյուր, 2016թ. էջ 93-104

²⁴ Шульгин, А. В. Внутренний контроль и управление рисками в коммерческом банке / А. В. Шульгин // Финансы и кредит. 2001. – №17. С. 22-40

²⁵ Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գոչ ծունեության հիմնական տնտեսական նորմատիվները (հավելված 3՝ Վարկային ռիսկի հաշվարկ), Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշում

Դրան զուգահեռ, պետք է նշել, որ տնտեսական իրական հատվածում ֆինանսական ռիսկերի կառավարման նորմատիվային կենտրոնացված կանոնակարգում չի գործում: Փոխարենը, կիրառվում են ֆինանսական իրավիճակը բնութագրող գործակիցներ, որոնք ախտորոշում են գործարարության ակտիվությունը, կազմակերպությունների ֆինանսական կայունության պաշարը: Սակայն, դեռևս այդ գործակիցները նորմատիվային բնույթ չեն կրում և անգամ լիարժեքորեն գործածության մեջ չեն առևտրային կազմակերպություններում, ելնելով մի շարք պատճառներից:

Նախ և առաջ, ի տարբերություն ֆինանսական համակարգում գործող կազմակերպությունների, տնտեսության իրական հատվածում գործող կազմակերպությունները իրենց տնտեսավարման կենտրոնացված կանոնակարգումը չեն ստանում, ինչպես ՀՀ կենտրոնական բանկն է կիրառում առևտրային բանկերի նկատմամբ: Եվ հետևաբար, տնտեսության իրական հատվածում գործող առևտրային կազմակերպությունները, ելնելով մրցակցային պայմաններից, իրենք են սահմանում ֆինանսական նորմատիվներ, որպեսզի իրականացնեն ճյուղի մակարդակով բենչմարքինգ: Բացի այդ, մասնագիտական գրականությունում ֆինանսական գործակիցների կիրառման նշանակությունը միանշանակ մոտեցում չի ցուցաբերվում, և երբեմն մերժվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը ելնելով այն հանգամանքից, որ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները տարբեր հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ են կազմվում, ուստի դրա հետևանքով տարբերությունների և անհամապատասխանությունների ռիսկեր են

պարունակվում է ֆինանսական գործակիցների հաշվարկներում:²⁶

Սակայն, չնայած նշված հանգամանքների, միևնույնն է, ֆինանսական գործակիցների կիրառումը կարող է լուրջ դերակատարում ունենալ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության ռիսկերի արդարացվածության և պոտենցիալ սպառնալիքների գնահատման ոլորտում (տես գծապատկեր 1.2.1): Մեր կարծիքով, անկախ այն հանգամանքից, թե առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ախտորոշման նորմատիվային ցուցանիշները կենտրոնացված կարգավորման ենթարկվում թե ոչ, պետք է տեղ գտնեն ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգում, իրենց սահմանափակիչ չափանիշներով որոշակիորեն դերակատարում ունենալով ռիսկերի նվազեցման վերահսկողության գործընթացում (տես գծապատկեր 1.2.1):

Այդ ռիսկ պատճառով, կարևորում ենք առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի կառավարման նորմատիվային կարգավորիչ ցուցանիշների համակարգի ներդրումը՝ ելնելով տնտեսավարման ոլորտի առանձնահատկություններ

²⁶ Финансы: учебник.- 3-е изд. / под ред. проф. В.Г. Князева, проф. В.А. Слепова. , М.: Магистр, 2010. стр. 201-202

ն եր հ ց : Մասնավորապես , այդ գործընթացի ձևավորման հիմք կարող են հանդիսանալ կազմակերպությունների մարդեն իսկ գործող իրացվելի ության , ինքնավար ության , գործարար ության ու շահույթաբեր ության գործող ֆինանսական գործակիցները , որոնց արժեքային մեծ ությունները պետք է վերամշակել և վերաիմաստավորել՝ հաշվի առնելով տնտեսական գործառույթների ռիսկայն ության աստիճանը :

Այսպես , ելնելով մեր կողմից ներկայացվող ֆինանսական ռիսկերի բնորոշումից , առևտրային կազմակերպությունների առևտրային ռիսկերի կառավարման ֆինանսական ռիսկերի ձևավորման ազդակները առաջին հերթին պետք է արտացոլվեն սեփական և փոխառումի ջոցների կառուցվածքային փոփոխությունների , կապիտալի շարժիչ ակտիվների վերադասավորումների ոլորտներում , ինչպես նաև դրամական գուտ հոսքերում : Ուստի , կարևոր ենք համարում ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացը իրականացնել արդեն իսկ իրավիճակային վերլուծ ության ժամանակ կիրառվող ավանդական գործակիցների հենքով , որոնք վերահաշվարկման ենթարկվելով՝ թիրախավորվելու են ռիսկային ոլորտների բացահայտմանը և այդ ուղղ ություններով վերահսկողական գործառույթների ու ժեղացմանը (տես գծապատկեր 1.2.1):

Այս առումով , առաջարկում ենք առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերը բնութագրող գործակիցների գործընթացը կազմակերպել վերանայումների սկզբունքով , կիրառելով փոխլրացումների աստիճանային հետևյալ քայլերը :

Առաջին քայլ . առևտրային կազմակերպությունները , ելնելով տնտես ության

կոնկրետ ճյուղի առանձնահատկություններին, սահմանում են ֆինանսական դրությունը ախտորոշող իրավիճակային գործակիցներ, որոնք առնչվում են կազմակերպության բնականոն և կայուն զարգացման ընթացքին: Բնականաբար, այդ գործակիցները կառուցվում են ավանդական սկզբունքով, ֆինանսական դրությունը կարգավորելով սահմանափակիչ արժեքներով:

Երկրորդ քայլ. տեսանելի ապագային միտված կազմվում են լավագույն, միջին և վատագույն բնորոշումներով սթրես սցենարներ, որոնք բացահայտում են

Ֆիւնանսական ռիսկերը ըստ ձևավորման երեք գոտիների՝ բնականոն ռիսկային, կրիտիկական ռիսկային, անթույլատրելի ռիսկային (տես ս գծապատկեր 1.2.2):


Երրորդ քայլ . Ֆիւնանսական դրուժյունը ախտորոշող գործող ավանդական գործակիցները հաջորդական վերալրացման են ենթարկվում այնպես, որ ելնելով սթրես սցենարներից, շղթայաբար ճշգրտվող ցուցանիշների կտրվածքով ձևավորեն բնականոն ռիսկային, կրիտիկական ռիսկային, անթույլատրելի ռիսկային գոտիներից եկող ազդակներ: Չնայած այն հանգամանքի, որ «սթրես սցենարային միջավայրը» բնութագրող ֆիւնանսական գործակիցը իր անվանումով մնում է անփոփոխ, այնուամենայնիվ ճշգրտվում է արժեքային մեծությունամբ, որը տարբերվում է տնտեսավարման բնականոն ընթացքի պարագայում նախօրոք սահմանված արժեքից:

Ընդ որում, ավանդական գործակիցների վերալրացումներով ֆիւնանսական ռիսկերի բացահայտման գործակիցների կառուցման տրամաբանությունը նույնպես իրականացվում է սահմանափակման մոտեցումներով: Այսինքն, որքան բարձրանում է ռիսկայնությունը, այնքան շղթայաբար խստացվում են սահմանափակող չափանիշները, հավելվելով ճշգրտված նախորդ ցուցանիշին (տես ս գծապատկեր 1.2.2):

Այսպիսով, ֆիւնանսական ռիսկերի ախտորոշման գործակիցներին ձևավորման առաջարկվող մեխանիզմը առևտրային կազմակերպություններում հնարավորություն կտալու ծելումի շարք խնդիրներ:

Առաջին, հաշվարկման պարզությունը և վերանայված արժեքներով ավանդական գործակիցներին կիրառումը ֆիւնանսական ռիսկերի

կառավարման համակարգում ոչ միայն առավել հեշտ կիրառելի է, այլև նպատակահարմար՝ համեմատության տեսանկյունից: Ընդ որում, ռիսկային սպառնալիքների ձևավորման դինամիկայի համեմատումները կարող են արվել հորիզոնական և ուղղահայաց կտրվածքով, հաշվի առնելով ինչպես վերլուծվող տարիները, այնպես էլ գործարարության տարբեր ոլորտները:



Գ ծ ա պ ա տ կ ե թ 1.2.2 Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ռ ի ս կ ե թ ի ա խ տ ո թ ո շ մ ա ն
գ ո թ ծ ա կ ի ց ն ե թ ի կ ա ռ ու ց մ ա ն առ ա ջ ար կ վ ո ղ
մ ե խ ա ն ի գ մ ը ²⁷

Երկրորդ, ֆինանսական ռիսկերի ախտորոշման գործակիցների ձևավորման առաջարկվող մեխանիզմը հիմնվում է տեսանելի ապագայում հնարավոր սցենարային զարգացումների վրա, որը համահունչ է ռիսկերից ակնկալվող հավանական իրադարձություններից բխող տարբեր աստիճանների անբարենպաստ հետևանքների և կորուստների տրամաբանությունը:

²⁷ Կազմված է ատենախոսի կողմից՝ տեսական հետազոտությունների հիման վրա:

Երրորդ, առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի գործակիցների կառուցման առաջարկվող մեխանիզմը փոխկապակցում է ոչ միայն հնարավոր բացասական սցենարային արդյունքները, այլև կառավարման համակարգում թույլ է տալիս ժամանակին բացահայտելու և վերլուծելու միմյանց վրա շղթայաբար ազդող ռիսկային գործոնները, որը կարևորվում է ռիսկերի գսպման համապարփակ կառավարչական որոշումների կայացման ժամանակ:

Այս առումով, կարևորվում են ֆինանսական ռիսկերի հաշվառման և վերլուծության գործառնությունները կառավարման համակարգում, որոնց մեթոդաբանականությունը առաջարկում ենք մշակել ռիսկերի ախտորոշման գործակիցների վերոնշյալ մեխանիզմի վրա:

1.3 Ֆինանսական ռիսկերի հաշվառման և վերլուծության գործառնությունները կազմակերպությունների կառավարման համակարգում

Հաշվապահական հաշվառման ուսումնասիրման առարկան ավանդաբար հանդիսացել են կազմակերպությունների ակտիվները, կապիտալը, պարտավորությունները, ֆինանսական արդյունքները, իսկ ֆինանսական ռիսկերը և դրանց փաստացի կամ ակնկալվող տնտեսական արդյունքները չեն ընդգրկվել հաշվառման գործընթացների շրջանակներում մի շարք պատճառներով: Նախ, ռիսկերի կառավարման գործընթացը համեմատաբար նոր է և ընդամենը երկու տասնյակ տարիների պատմություն ունի: Ուստի

Երբևէ անհրաժեշտություն չի առաջացել դրանք արձանագրելու, հաշվառելու, և նամանավանդ՝ հաշվետվական տեղեկատվություններ կայացնելու: Բացի այդ, դեռևս տեսություն մեջ և գործնականում դժվարություններ և տարակարծություններ են առաջանում ֆինանսական ռիսկերի ճանաչման, արժևորման և չափման հարցերում:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական

